№ 189 Հոկտեմբերի 13 (25) 1881 Հոկտեմբերի 13 (25) № 189

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Ստորագրագրացիր պիտի ուղղվի
Тифлисъ. Редакція «Мшака»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դարձեալ ճեմարանի մասին։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Ս. Պետերբուրգից։ Ներքին լուրեր։ — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Տրոտսրի զեկուցումը հայերի մասին։ Հայոց խնդիր։—Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ԾԱՆՈՒՑԱՐԱԲՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԴԱՐՁԵԱԼ ՃԵՄԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

—

„Մշակի“ № 187 մէջ հրատարակված առաջնորդող յօդուածը Էջմիածնի ճեմարանի մասին, թէեւ մեր մամուլի մէջ ալեձգանք չը գտաւ դեռ ևս, բայց դարձաւ Թիֆլիսի մէջ խօսակցութեան առարկայ։ Շատերը, գուցէ մեծ մասը ընթերցողների, համաձայնվում էին մեր յայտնած մտքերի հետ, բայց մի քանիս ասում էին թէ կամայ ակամայ Էջմիածնի ճեմարանի վարչութիւնը ստիպված էր նշանակել ռէկտորին և պրոֆէսորներին այդքան մեծ ռոճիկներ և հրաւիրել Նահապետեանի ու նրա այժմեան ընկերների պէս մարդկանց, քանի որ ոչ ոք չէր կամենում և չէր կամենայ գնալ, նստել Վաղարշապատի պէս մի յետ ընկած տեղում։

Նախ և առաջ մեզ հաստատ աղբիւրներից յայտնի է որ ճեմարանը երբէք չէ հրաւիրել ոչ Էմինին, ոչ Պատկանեանին, ոչ էլ մի այլ որ և է յայտնի հայ կամ հայագէտ գիտնականին։ Երկրորդ՝ միթէ Նահապետեան և նրա ընկերները այն աստիճան երևելի գիտնականներ են, որ բացառութիւն կազմելով մեր ինտելիգէնցիայի մէջ, չէին կարող համաձայնվել գնալ Վաղարշապատ աւելի պակաս ռոճիկով, քան թէ այժմ ստանում են։

„Ոչ ոք չէր գնայ Վաղարշապատ“ կրկնում են մի քանի կարծատեսներ։ Հարցնող լինի՝ ի՞նչ բան է Վաղարշապատ։ միթէ նա աւելի վատ տեղ է, քան թէ Շուշի, Ալեքսանդրապոլ, Բագու, Ագուլիս, Ախալցխա.... Վաղարշապատը խօ՛ Միջին Ասիայում չէ գտնվում։ Եւ մինչև Նահապետեանի այդտեղ գնալը ինչքա՞ն նրա նման բարձր ուսում ստացածներ վարժապետութիւն էին անում նոյն իսկ Վաղարշապատում և նոյն իսկ ճեմարանում, աւելի փոքր ռոճիկով։

Հազար և մի օրինակներ կարող ենք բերել որ մեր բարձր ուսում ստացածները, որոնք գիտական Արշակ Նահապետեանից ոչինչով պակաս չեն, այլ շատ բաներում գուցէ էլ բարձր են նրանից, հանգիստ նստած էին և մինչև այժմ նստած են գաւառական այլ և այլ յետ ընկած անկիւններում, համեստ ռոճիկով վարժապետութիւն կամ տեսչութիւն անելիս։

Լեոն Թիւսիկեան նրա պէս բարձր ուսում ստացած չէ միթէ. նա տարիներով նստած էր և Վաղարշապատում, և Ագուլիսում և Բագուի մէջ։ Բժիշկ Տէր-Գրիգորեան անուշան ռոճիկով համ վարժապետութիւն, համ բժշկութիւն էր անում Վաղարշապատում։ Բարխուդարեանց, որ բացի բարձր ուսում ստացած լինելուց, մեր յայտնի գրողներից մին է, նստած էր Ախալցխայում։ Նահապետեանից ոչ պակաս բարձր ուսում ստացած Աբիսողոմ Յովհաննիսեան տեսչութիւն էր անում Ալեքսանդրապոլում, և այլն....

Բացի սորանից մենք ունենք անձինք, որոնք թէև բարձրագոյն ուսում չեն ստացել, բայց հազար անգամ աւելի յայտնի են ամբողջ հայութեանը, քան թէ մի անյայտ Արշակ Նահապետեան, յայտնի են իրանց գրականական ստեղծուածներով, վատ թէ լաւ ունեն մի անուն որ կը մնայ մեր գրականութեան պատմութեան մէջ. սրանք են Բաֆֆի, Պռօշեան, Աղայեանց,—և սրանք աննշան ռոճիկներով քանի տարի նստել են և նստում են գաւառներում՝ Շուշում, Ագուլիսում, Վաղարշապատում, նոյն իսկ Պարսկաստանում, տեսչութիւն կամ վարժապետութիւն անելիս....

Բայց մեզ կասեն որ մանկավարժական հմտութիւնները կարող են ներկայացնել միմիայն բարձրագոյն ուսում ստացած անձինք։ Այն ժամանակ մենք կը յիշեցնենք Էջմիածնին որ նոյն իսկ նրա պատերի մէջ, նրա միաբանների թիւում գտնվում են աբեղայական շորերով բարձրագոյն ուսում տացած անձինք, որոնք իրանց ուսումով ոչինչով պակաս չեն Նահապետեանից, բայց շատ բաներում բարձր էլ են նրանից։ Ցիշենք միայն երեք համալսարանական աբեղաներ՝ Բաստամեանց, Ստեփանէ և Աղաֆիրեանց։ Ինչո՞վ նրանք ստոր են այժմեան պարոն ռէկտորից. նրանք նրա պէս համալսարանական դիպլօմ ունեն, բացի սորանից երեքն էլ յայտնի են իրանց գրականական աշխատանքներով, իսկ Նահապետեան ոչինչ գրուածքով յայտնի չէ։

Այդտեղ մենք յիշեցնում ենք այն անձանց, որոնք միշտ պատրաստ են մեզ մատնել և ինչպէս լսում ենք, արդէն մատնել են մեզ որպէս թշնամի եկեղեցու, որ մենք թշնամի ենք ոչ թէ եկեղեցու, այլ նրա անարժան սպասաւորների, մենք թշնամի ենք ոչ թէ հիմնարկութեան, այլ նրա մէջ գործվող զեղծումների։ Ընդհակառակն, մենք մատնացոյց անելով Ստեփանէի, Բաստամեանցի և Աղաֆիրեանցի վրա, ցոյց ենք տալիս որ մեզ մի և նոյն է ինչ զգեստներով հագնված կը լինի մարդը, միայն թէ նա լուսաւորված մարդ լինի։ Մենք անկողմնապահութիւնը և անկեղծութիւնը համարում ենք հասարակական գործիչների առաջին պարտաւորութիւն։ Ընդհակառակն ինքն Էջմիածինը ապացուցել է որ ոչինչ նշանակութիւն չէ տալիս մի համալսարական մարդուն, որ հագել է աբեղայական շորերը, որ իր միաբան է դարձել։

Էջմիածինը հրաւիրում է ահագին ռոճիկով կատարելապէս անյայտ մի աշխարհական համալսարանականին, իսկ անտես է առնում կրօնական շորերը հագած համալսարանականներին, որոնք առաջինին հաւասար են ուսումով, բայց անհամեմատ բարձր են նրանից, ունելով արդէն մի գրականական անուն։ Եւ եթէ ճեմարանը կը հրաւիրի էլ այս աբեղաներին տեսչի կամ վարժապետի պաշտօնի,—կը տայ նրանց ամենաանշան ռոճիկներ, որովհետև նրանք կրօնաւորներ են դարձել.... Դորանով ինքն Էջմիածինը ոչինչ նշանակութիւն չէ տալիս, արհամարհում է, մինչև անգամ հալածում է իր ճշմարիտ կրթված, բարձր ուսում ստացած միաբաններին։

Այժմ ո՞ւմ է աւելի յարմարվում եկեղեցու թշնամի անունը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

—

3 Հոկտեմբերի

Ես խոստացել էի «Մշակի» ընթերցողներին Բ. Պ. Պատկանեանի երկասիրութեան՝ «Ванскіе надписи и значеніе ихъ для исторіи передней Азіи» թարգմանը լինել...

Պատկառելի հեղինակը հետեւեալ փոքրիկ յառաջաբանով է սկսում իր ծանրակշիռ և բարեմոյն հետազօտութիւնը։

«Քանի որ դեռ Եւրոպայի երեք քառորդը ծածկված էր անտառներով, ցանցառուվի բնակեցեալ անյայտ ազգերից, աւելի ևս վաղ՝ քան Կիւրոս պարսից թագաւորութիւնը հիմնեց, երբ Յունաստանում կարգաւորվում էին Օլիմպիական խաղերը և տեւում էին Մեսսինեան պատերազմները, իսկ Հռոմում թագաւորում էին Հռոմուլոս և Նումա Պոմպիլիոսը, եթէ իրօք սրանք թագաւորել են երբ և իցէ,— ահա այս հեռագոյն պատմական տարեթուում Վանի ժայռերի վրա և Հայաստանի զանազան տեղերում մի անյայտ ազգ քանդակում էր արձանագրեր, որոնք պահպանվել են և մինչև այժմ, որպէս մի առեղծանելիկ գցած հնութիւնից մեր ժամանակին լուծելու համար»։

«Այս արձանագրեր թողնողը ինչ ազգ էր։ Ի՞նչ լեզուով։ Ի՞նչ այբուբեն։ Ի՞նչ են բովանդակում իրանց մէջ այս արձանագրերը։ Ահա հարցեր, որոնց համար ժամանակը դեռ չէ եկել մի որ և է բաւեցուցիչ պատասխան ստանալու»։

«Անկասկած, սրանց մէջ պարունակված գաղտնիքը իր ժամանակին կը խոնարհի մարդի կորովամիտ իմաստասիրութեան առջև,— և այդ արձանագրերը, որք գրված են կարդալու համար, ինչպէս ասում է Օպպերտ,— վերջապէս կը կարդացվին։ Բայց այդ ժամանակը դեռ չէ հասել։ Այս յօդուածի նպատակն է ծանօթացնել ընթերցողին թէ՝ ինչ է կատարած մինչև այժմ այս խնդիրները լուծելու համար։ Սակայն, մենք պիտի խոստովանենք, որ մինչև այժմ շատ քիչ է արած. արտայայտված են մի քանի ենթադրութիւններ, որք եթէ հաստատվեն, հանդիման կը գան յուսալիր դիրքեր հանդերձեալ հեռաւոր հետազօտութեանց համար»։

Սեպագիր։ Վանի արձանագրերը և սրանց վերծանութեան (дешифровка) պատմութիւնը։

Հայոց պատմութիւնում, գլխ. XVI գիրք ա., Մովսէս Խորենացին պատմում է թէ՝ ինչպէս այրասիրտն այն և կաթոգն Շամիրամ հիմնեց Վանը։ Նկարագրելով Վանի շինութիւնները, Խորենացին շարայարում է՝

Իսկ զընդդէմ արեգական կողմն անձաւին, որ և ոչ գիծ մի երկաթոյ այժմ վերագրել ոք կարէ, զայսպիսի կարծրութիւն նիւթոյ՝ պէս պէս տաճարս և սենեակս օթից և տունս գանձուց և վիժս երկարս, ոչ գիտէ ոք՝ թէ որպիսեաց իրաց պատրաստութիւն հրաչակերտեայ։ Իսկ զամենայն երեսս քարին իբր գրչաւ զմոմ հարթել, բազում գիրս ի նմա գրեաց. որոյ հայեցուածն միայն զամենայն ոք ի զարմանս ածէ։ Եւ ոչ միայն այս, այլև ի բազում տեղիս յաշխարհին հայոց արձանս հաստատեալ, նովին գրով յիշատակ ինչ հրամայէ գրել և ի բազում տեղիս սահմանս նովին գրով հաստատէր։

Աւելորդ է աւելցնել, գրում է յարգելի պրոֆեսորը,— որ ինչպէս այս շինութիւններում, նոյնպէս և արձանագրութիւններում, Շամիրամը մի որ և է մասնակցութիւն չէ ունեցել։ Շամիրամի նշանակութեան վրա, հայոց աւանդութիւնների մէջ, կը խօսենք իր տեղում։

Այժմեան Վանը, նրա շրջակայքը ու սեպագրերը, որոնց բովանդակութիւնը մասամբ և հաղորդում է, նկարագրել է Լայեարդ (Layard Nineveh and Babylon 1850)։ Մէկ ուրիշ ևս ճանապարհորդ, Միսիթարեան ուխտից, Ներսէս Սարգիսեանը, որ երկար ժամանակ թափառած է եղել Վանայ լճի կողմերում, լոյս ընծայեց 1864 թուին մի ընդարձակ նկարագիր այս երկրի տեղագրութեան և տոհմագրութեան վրա։ Սա էլ ուշադրութիւն էր դարձրել սեպագրական արձանագրերի վրա և յարակցել է իր «ճանապարհորդութեանը» արձանագրերի վիմագրական ութ պուրակ (չարք)։ Վան այցելող եղել են և ուրիշ ճանապարհորդներ, օրինակի համար՝ Տեկսիէ, Ե. Բարէ և այլն, բայց գիտութեան օգտին արած մեծ ծառայութեան պատիւը, անշուշտ պատկանում է Շուլցին։ Սա 1828 թուին այստեղից ուղարկում է Եւրոպա քառասուն և երկու հատ սեպագրական արձանագրերի պատճէններ ու ինքը մէկ քուրդ ցեղապետի ձեռից դաւաճանութեան զոհ գնում։ Շուլցը իր օրագրում (Journ. Asiat. III Serie, t. XI 1840) շատ դիպուածներում հաղորդում է այստեղ ստացած իր տպաւորութիւնները համարեա թէ խորենացիի խօսքերով, չը նայելով որ սրանից յետոյ անցել է տասն և հինգ դար։

Առաւել քան 1500 տարի Քրիստոսից առաջ Տիգրիս և Եփրատ գետերի ափերի վրա գտնված երկիրներում սկսեցին գործ ածել նշանախէցներ, որոնք իրանց արտաքին ձևագրութեամբ իրապէս զանազանվում էին թէ այբուբենական տառերից, թէ իերոգլիֆներից, և հաւանական է որ այս նշանախէցները իերոգլիֆների և այբուբենական տառերի միջի քայլափոխն են կազմում։ Մեր խօսքը սեպագրերի վրա է։ Սեպագիր (inscriptiones cuneatae, cuneus—սեպ բառից, écriture cunéiforme, Keilschrift, cuneatic writing, նոյնպէս և՝ arrow—headed scripture) մականունը տուած է սրանց այն հիման վրա, որ սրանք բաղկացած են սեպից և անկիւնից, որոնց բաց կողմը միշտ դէպի աջ է ուղղված։ Այս երկու նշանով սեպագիրը արտայայտում է բաւականօրէն լեզուի ամենայն հնչիւնների բաղդիւսանքը։

Այս երկու նշանների վրա հիմնված են երկու՝ միմեանցից բոլորովին տարբեր գծագրական դրութիւններ (սիստեմաներ) Արիական և Անարիական կամ՝ ինչպէս ոմանք անուանում են՝ սիլլաբական (սիղաբայ, սիւղաբայ յուն., հայերէն փաղառական—կը նշանակէ—վանկաւոր)։ Իմաստ առնելով, որ ամեն անարիական սիստեմաներից Ասորեստանականը հասել է իր զարգացման վերին աստիճանին և որին հմտանալուց յետ դիւրանում են անարիական միւս սիստեմաները, գերազգօն հեղինակը ընդարձակ տեղ է տալիս իր գրքի մէջ այս սիստեմային։ Մենք ցաւօք սրտի բաց պիտի թողնենք այն ամեն գեղեցիկ բացատրութիւնները, որ անում է պրոֆեսորը։ Հարկ է մեզ՝ միանգամ ընդ միշտ՝ ասել ևս այն, որ այս գրքի այն տեղերը, որոնք շատ հետաքրքիր մթերքներ են հանդիսանում, մեր նամակների նեղ շրջանակների պատճառով, հարկադրված ենք բարձի թողի առնել, յուսալով որ մեր թարգմանիչները անշուշտ մի օր կը թարգմանեն այս գիրքը....—Մենք այն պատճառաւ ընդարձակ տեղ տուինք, ասում է պ. Պատկանեանը, դառնալով Վանի արձանագրերին,— որ Ասորեստանական գրութեան աղդեցութիւնները շատ զգալի կերպով արտադատվում են Վանի արձանագրութեան ծագման վրա. 106 յե-